Եւ նա նստէր մինչ ի սուրբ Խաչն Վարագայ, մինչեւ զամենայն հաստատագոյն առնէր թէ զինչ պիտոյն էր։ Եւ Սեպտեմբերի Ա. երկրորդ անգամ գնաց Վարդապետն ի Պուրսա եւ մեք ոչ գնացաք վասն Ղազարի ումեմն, որ ի գնալն մեր ի Պուրսա՝ ի դաս քաշեալ զՎարդապետն, ոչինչ կարացեալ գնել վնաս, այլ թէ՝ կամի զլխ հանել ի քաղաքէս, ո՞ւր երթամ, զի քաղաքացի եմ։ Այլ սա այսպէս եղեւ. յորժամ բանադրեցաւ յէջմիածնէ, բարձի թողի արար զնա կաթողիկոսն եւ ոչ արձակեաց վասն յանդգնութեան եւ հակառակութեան, եւ սա ելեալ գնաց ի Տիվրիկի(*) յառաջնորդութեան, որք խաղաղասէր ոմանք հրաւիրեցին ի սոյն, զոր ի տեղւոջ իւրում գրեալ եմք։ Եւ անտի երթեալ ի Սսայ կաթողիկոսն Խաչատուր եւ առնէ զաւազան եւ եպիսկոպոսութիւն, եւ դարձաւ վաղվաղակի ի քաղաքս թէ վասն հրամանաց թագաւորի եկի զի նորոգեցից զվանս իմ. յորում կէտի աղմուկն էր իշխանաց քաղաքիս ընդ վարդապետսն։ Եւ նստէր սա ի Սուրբ Նիկողոս. եւ յորժամ Մարտիրոս վարդապետն եղեւ պատրիգ, ոչինչ ասաց ցնա, այլ որք հարցանէինն՝ զվանքն պատճառէր, վասն որոյ եւ ի գնալն մեր ի Պուրսա յայտնեցաւ չարութիւն նորա եւ ծանոյց զայս բան առ քէհեա վէգիլին, եւ նա կամէր կորուսանել աքսորմամբ, բայց այլք ի մերայնոցն ոչ թողին։ Եւ եկաք ի Պուրսայու, դատապարտեցաւ նա եւ եղեւ խայտառակ. եւ զի յուսացեալ էր ի Տիվրիկցի արս ոմանս եւ ի գլխաւորս նոցունց որ Շրվան անուն ասի՝ չիգար այր եւ փառամոլ գլուտխար։ Սա եկն իւրայնօքն եկեալ առ վարդապետն թէ ի՞նչ ուզես մեր Ղազար առաջնորդէն. եւ վնաս ոչ գտաւ ի նա, այլ ամօ-

(*) Վերջին գրիչ մը (Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան) **Տիվրիկ**, **Տիվրիկցի** բառերուն վրայ գրած է **Սեւաստ**, **Սեւաստացի**։